Աստվածայնորեն սահմանված աղբյուրների օգտագործումը

Նախորդ դասում ներկայացվում էր Էդրին, որը հարցրել էր. «Եթե իրոք սիրող Աստված կա, ինչո՞ւ է Նա թույլ տալիս, որ մարդիկ տառապեն»: Աստվածայնորեն սահմանված աղբյուրներից ճշմարտությունը փնտրելու հմտությունը զարգացնելու համար հատկացրեք մի քանի րոպե և կատարեք ստորև ներկայացվող վարժություններից առնվազն երկուսը: Ձեր օրագրում գրանցեք ձեր սովորած նյութը:

1. Ծնողներ և Եկեղեցու ղեկավարներ. Էդրիի հարցը ուղարկեք որևէ ծնողի կամ Եկեղեցու ղեկավարի և բացատրեք, որ հարցը քննարկում եք սեմինարիայում և ցանկանում եք իմանալ նրանց կարծիքն այդ մասին:

2. Աղոթք. լուռ անձնական աղոթքում Տիրոջից այս հարցի վերաբերյալ ուղղորդում և Սուրբ Հոգուց ոգեշնչում խնդրեք: Գրառեք ձեզ մոտ եկող մտքերն ու զգացողությունները:

3. Սուրբ գրություններ. գտեք այն սուրբ գրությունները, որոնք կարող են օգնել Էդրիին: Օրինակ՝ Մորմոնի Գրքում կարող եք կարդալ Ալմայի ժողովրդի մասին, որոնք տառապում էին ֆիզիկական գերությունից (տես Մոսիա 23.21–23, 24.8–15):

4. Տիրոջ մարգարեները. գտեք մարգարեական խոսքեր, որոնք կարող են օգնել Էդրիին: Օրինակ՝ կարդացեք Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինի (1917–2008) հետևյալ հայտարարությունը.

> Հուսահատությանը, տանջանքներին և վշտին դիմանալ սովորելը մեր գործնական ուսուցման մասն է կազմում Այդ փորձառությունները, որոնք հաճախ դժվար է տանել, իրականում այնպիսի փորձառություններ են, որոնք ընդլայնում են մեր հասկացողությունը, զարգացնում մեր բնավորությունը և ավելացնում ուրիշների հանդեպ մեր կարեկցանքը:
>
> Քանի որ Հիսուս Քրիստոսը խորապես տառապել է, Նա հասկանում է մեր տառապանքը: Նա հասկանում է մեր վիշտը: Մենք կրում ենք դժվարություններ, որպեսզի մենք ևս ունենանք ավելի շատ կարեկցանք և հասկացողություն մյուսների հանդեպ: (Ջոզեֆ Բ. Վիրթլին, «Ինչ էլ որ լինում է, սիրիր այն», *Լիահոնա*, նոյեմբեր 2008, 27):

- Ի՞նչ ուսուցանեցին այս աղբյուրները, որով կցանկանայիք կիսվել Էդրիի հետ:

- Ի՞նչ իմացաք, որը կփոխի դժվար հարցերին պատասխաններ փնտրելու ձեր մոտեցումը:

© 2023 by Intellectual Reserve, Inc. All rights reserved.